ԳՆԱՃԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՃՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Բագրատ ԱՍԱՏՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Եվգենյա ՀԱՅՐԻՅԱՆ
ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս

ՀՏԴ 338:330

Ժամանակակից պայմաններում, երբ ԼՂՀ տնտեսական քաղաքականությունը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով, տնտեսական քաղաքականության մեջ կիրառվում են մոտեցումներ ու սկզբունքներ, որոնք էապես տարբերվում են ՀՀ-ում համանման խնդիրների լուծումներից: Գնաճի արդյունավետ կառավարումը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: Ընդ որում՝ գնաճի արդյունավետ կառավարումը, բացի այն բանից, որ կարեւոր ազդեցություն կունենա ԼՂՀ տնտեսության վրա, կարող է որոշ ազդեցություն թողել նաեւ ՀՀ տնտեսության եւ մասնավորապես՝ գնաճի դրսեւորումների վրա: Պետք է նկատի ունենալ, որ թեեւ ԼՂՀ-ն իր սոցիալ-տնտեսական բնութագրերով համադրելի է ՀՀ ոչ մեծ մարզերին՝ բնակչության թիվը կազմում է ՀՀ բնակչության 5%-ը, ՀՆԱ-ի ծավալները եւս կազմում են ՀՀ ՀՆԱ-ի 5%-ը, իսկ բյուջեի եկամուտները (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները, հիմնականում՝ ՀՀ բյուջեից)՝ շուրջ 7%-ը, սակայն ԼՂՀ ֆինանսական հատվածի բնութագրերը՝ դրամաշրջանառության ծավալներից մինչեւ տարբեր աղբյուրներից ֆինանսական հոսքեր, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը եւ ԼՂՀ տնտեսության տարբեր հատվածներ ներդրումների ծավալները, առանձնանում են ավելի բարձր ցուցանիշներով: Նշված տարբերությունները քաղաքական այն դիրքորոշումների հետեւանք եւ արդյունքն են, որոնք տարիներ առաջ ձեւավորվել էին ՀՀ-ում, եւ կոչված էին ապահովել, մասնավորապես, պատերազմից տուժած ԼՂՀ տնտեսության վերականգնումը եւ առաջանցիկ զարգացումը, սոցիալ-մշակութային գրավչությունը, ինչպես նաեւ լայն իմաստով վերարտադրությունը:

2002-2012թթ. ժամանակահատվածում ԼՂՀ-ում գնաճն ընդհանուր առմամբ դրսեւորվել է ՀՀ-ում տեղի ունեցող գնաճային գործընթացին համահունչ: 2002-12թթ. ընթացքում միջին տարեկան գնաճը ԼՂՀ-ում դրսեւորել է ավելի բարձր մակարդակ, քան ՀՀ-ում: Վերջինը հիմնականում պայմանավորված էր պարենային եւ ոչ պարենային ապրանքատեսակները ՀՀ-ից ներկրելու հանգամանքով:

2002-12թթ. ԼՂՀ-ում տնտեսական աճի մակարդակը դրսեւորել է ավելի բարձր մակարդակ, քան ՀՀ-ում. ԼՂՀ-ում տնտեսական աճի միջին մակարդակը կազմել է 12.2%, իսկ ՀՀ-ում՝ 7.7%: Վերջինը պայմանավորված էր միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով ՀՀ տնտեսության մեջ 2009թ. արձանագրված 14.2% անկմամբ: Լինելով փակ՝ ԼՂՀ տնտեսությունը ամբողջովին չկրեց ֆինանսատնտեսական ճգնաճամի բացասական ազդեցությունները:

Գծապատկեր 1.

Սպառողական գների ինդեքսի ու ՀՆԱ-ի դինամիկան ՀՀ-ում եւ ԼՂՀ-ում 2002-2012թթ.[1]



Գծապատկեր 2.

Վարկային ներդրումների դինամիկան ԼՂՀ-ում 2002-2012թթ.՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլն ՀՀ դրամ)[2]



Հարկ է ընդգծել, որ ԼՂՀ-ում գնաճի կառավարման խնդիրը որոշակի սրություն է ձեռք բերում ներկա պայմաններում, երբ մշակվում եւ ձեռնարկվում են տնտեսական զարգացման խնդիրներ: Այս տեսանկյունից, բացի սկզբնապես առկա՝ ԼՂՀ-ում իրականացվող տնտեսական ու մասնավորապես ֆիսկալ քաղաքականության՝ ՀՀ ԿԲ կողմից մշակվող դրամավարկային քաղաքականության վրա հնարավոր ազդեցության խնդրից, առանցքային է դառնում իրականացվող դրամավարկային քաղաքականությունը տնտեսական եւ հարկաբյուջետային քաղաքականության հետ փոխհամաձայնեցնելու հարցը:

ՀՀ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը ԼՂՀ տնտեսության վրա կրում է երկակի բնույթ: Նախ, լինելով տնտեսության կարգավորման անուղղակի միջնորդ, ՀՀ ԿԲ-ն, իրականացնելով դրամավարկային քաղաքականություն,

Գծապատկեր 3.

Պարենային ապրանքների միջին մակարդակը ՀՀ-ում եւ ԼՂՀ-ում 2002-2012թթ.[3]



Գծապատկեր 4.

Ոչ պարենային ապրանքների գների ինդեքսի դինամիկան ՀՀ-ում եւ ԼՂՀ-ում 2002-2012թթ.[4]



անուղղակիորեն ազդում է ֆինանսական շուկայի մասնակիցների վրա: Վերջիններս էլ իրենց հերթին դրսեւորելով որոշակի վարքագիծ՝ տնտեսության վրա ունեցնում են ընդլայնողական կամ զսպող ազդեցություն: Մյուս կողմից՝ ԼՂՀ-ն ուղղակիորեն ՀՀ տնտեսության մասնակիցը չէ: Իրականացնելով հարկաբյուջետային անկախ քաղաքականություն, բայց գտնվելով դրամավարկային միասնական քաղաքականության տիրույթում՝ ԼՂՀ տնտեսությունը ՀՀ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը կրում է ԼՂՀ բանկային համակարգի, մասնավորապես՝ վերջինիս կողմից տնտեսությանը տրամադրվող վարկերի միջոցով: Կենտրոնական բանկի սահմանած դրամավարկային քաղաքականության տարբերի գործիքների տոկոսադրույքներից կախված՝ բանկերն իրենց վարքագիծն են դրսեւորում վարկերի տրամադրման ու ավանդների ներգրավման տոկոսադրույքների սահմանման տեսանկյունից: Ու քանի որ ԼՂՀ բանկային համակարգը ՀՀ բանկային բանկային համակարգի մասն է, վերոնշյալ փոխանցումային մեխանիզմների ազդեցության շնորհիվ ԼՂՀ տնտեսությունը անմիջականորեն կրում է ՀՀ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը: Սակայն, ինչպես նշվեց, ԼՂՀ-ում իրականացվող տնտեսական ու ֆիսկալ ուրույն քաղաքականությունը, ինչպես նաեւ տնտեսության մեջ կիրառվող որոշակի գործիքները, ինչպես առեւտրային բանկերի տրամադրած վարկերի տոկոսների գեղչումը, արտոնյալ պայմաններով տնտեսության որոշ հատվածներին վարկերի տրամադրումը, տնտեսական նշանակություն ունեցող որոշ ծրագրերը բարեգործական հիմնադրամների միջոցների հաշվին իրագործելը եւ այլն, ստեղծում են փողի առաջարկի ձեւավորման ու դրսեւորման առնձնահատուկ վիճակ: Ընդ որում՝ ժամանակի ընթացքում տնտեսական քաղաքականության մեջ կիրառվող առանձնահատուկ գործիքների ու մեխանիզմների ծավալն ընդլայնվում է: Այսպես, եթե 2002թ. ԼՂՀ-ում տրամադրված վարկերի ծավալը կազմում էր ՀՀ-ում տրամադրված վարկերի 1.5%-ը, ապա 2012թ. այն աճել է մինչեւ 4.8%, այսինքն՝ վարկավորման ծավալների տարիներ շարունակ դրսեւորվող անհամադրելիությունը հաղթահարվել է, եւ ներկայում ԼՂՀ-ում վարկավորման ծավալները համադրելի են ՀՀ-ի համապատասխան ցուցանիշի հետ:

2002-12թթ. ժամանակահատվածում ԼՂՀ-ում ըստ տնտեսության ճյուղերի տրամադրված վարկերի դինամիկան ընդհանուր առմամբ դրսեւորվել է ՀՀ համանման ցուցանիշներին համահունչ՝ արձանագրելով որոշ տարբերություններ: Արդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի դինամիկան ԼՂՀ-ում դրեւորվել է ինչպես աճի, այնպես էլ նվազման տեսքով: Վերջինի ծավալների կտրուկ աճ սկսեց գրանցվել 2007 թվականից, այնուհետ արձանագրվեց արդյունաբերական ոլորտին տրամադրվող վարկերի ծավալների անկում՝ մինչեւ 2010 թվականը, որից հետո նշված ոլորտին տրամադրվող վարկերը սկսեցին դրսեւորվել աճի տեսքով:

Հարկ է ընդգծել, որ ԼՂՀ-ում գործող Արցախի ներդրումային ու Գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամները գործընկեր առեւտրային բանկերի եւ վարկային կազմակերպությունների միջոցով իրականացնում են արտոնյալ վարկավորման տարբեր ծրագրեր, որոնք կազմում են ընդհանուր վարկային ներդրումների 8-12%-ը: Բացի վերոնշյալից, Արցախի ներդրումային հիմնադրամն իրականացնում է փոքր եւ միջին բիզնեսին ուղղված եւ հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագրերը, իսկ Գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը՝ գյուղատնտեսությանը տրամադրվող արտոնյալ վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագրերը: ԼՂՀ-ում գյուղատնտեսությանն ուղղված վարկերի նկատելի աճը 2010-ից պայմանավորված էր հիմնադրամի կողմից իրականացվող արտոնյալ վարկավորման ծրագրերով:

ԼՂՀ տնտեսության զարգացման համար կարեւոր նշանակություն ունի նաեւ բարեգործական տարբեր ծրագրերի իրականացումը: 2009-12թթ. ընթացքում իրականացվել են բարեգործական ծրագրեր՝ 11.5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ: Ծրագրերի մեծ մասը վերաբերում է ջրամատակարարման, կրթության եւ գիտության, առողջապահության եւ շինարարության ոլորտներին: Թեեւ այդ ծրագրերը բարեգործական են, այդուհանդերձ՝ որոշակի ազդեցություն են ունենում ԼՂՀ-ում տնտեսական ակտիվության ու մասնավորապես ֆինանսական հոսքերի եւ ի վերջո՝ նաեւ գնաճային միջավայրի վրա:

Դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակը գների կայուն մակարդակի ապահովումն է: Այս տեսանկյունից կարեւորվում է գնաճի կանխատեսելիության մակարդակի արդյունավետության բարձրացումը, որը Կենտրոնական բանկին հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպել դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացը: Այս տեսանկյունից կարեւորվում են ՀՀ կենտրոնական բանկի եւ հարկաբյուջետային քաղաքականությունը մշակող եւ իրականացնող մարմնի միջեւ համագործակցության մեխանիզմների հստակեցումն ու կատարելագործումը:

Դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունավետության չափանիշը կանխատեսված գնաճի համանման ցուցանիշի արձանագրումն է իրական տնտեսության մեջ: Այս առումով ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԼՂՀ տնտեսության մեջ մեծ դեր ու նշանակություն է ձեռք բերում գնաճի արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրումը:

Նշված ժամանակաընթացքում, մինչեւ 2010թ., սպառողական գների ինդեքսի դինամիկան դրսեւորվել է ՀՆԱ-ի աճին համահունչ: Տնտեսության զարգացման համար անկայուն էր 2010 թվականը, երբ ՀՆԱ-ի անկմանը զուգընթաց՝ նկատվել է ստառողական գների ինդեքսի աճ: Այնուհետեւ, վերջին երկու տարիների ընթացքում, տնտեսության մեջ ՀՆԱ-ի աճին զուգընթաց՝ սկսեց դրսեւորվել սպառողական գների անկում՝ պայմանավորված ոչ պարենային ապրանքների գնանկմամբ:

Պարենային ապրանքների գների ձեւավորման տեսանկյունից ԼՂՀ-ում առկա են որոշ առանձնահատկություններ: Մասնավորապես՝ այն ապրանքների գծով, որոնք ինչպես ՀՀ-ն, այնպես էլ ԼՂՀ-ն ներկրում է արտերկրից, գնաճի դրսեւորումները երկու հանրապետություններում էլ եղել են համահունչ, իսկ այն արտադրատեսակների պարագայում, որոնք ԼՂՀ-ն տեղական արտադրանքի անբավարարության պատճառով

Աղյուսակ 1.

ԼՂՀ 2010-2013թթ. պետական բյուջեների դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները (մլն ՀՀ դրամ)[5]

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները	2010	2011	2012	2013
Վարկերի և փոխատվությունների ստացում	2,500,000.0	4,000,000.0	13,117,316.2	13,957,442.2
Ֆինանսական ակտիվներ	673,895.0	597,198.8	160,000.0	50,000.0
այդ թվում՝				
Ելքերի ֆինանսավորմանն ուղղվող տարեսկզբի ազատ միջոցներ	300,000.0	300,000.0	50,000.0	50,000.0
Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքեր	30,000.0	30,000.0	10,000.0	---
Այլ	343,895.0	267,198.8	100,000.0	---

Աղյուսակ 2.

Զուտ փոխառու միջոցների դինամիկան ԼՂՀ-ում 2010-2012թթ. (մլն դրամ)[6]

	2010	2011	2012
Փոխառու զուտ միջոցներ	2,500,000.0	3,402,801.2	5,156,427.6

ներկրում է ՀՀ-ից, գնաճային ճնշումները առավել ցայտուն են դրսեւորվել ԼՂՀ-ում, ինչը պայմանավորված է եւ՛ ներկրման ծախսերով, եւ՛ սպառման միջնորդ օղակի ավելացմամբ: Վերլուծությունից պարզվում է, որ պարենային ապրանքատեսակներից մրգի ու բանջարեղենի գծով գնաճային ճնշումները ավելի բարձր էին ԼՂՀ-ում, վերոնշյալ հանգամանքից ելնելով: Իսկ այն արտադրատեսակների պարագայում, որոնց արտադրությունը համեմատաբար զարգացած է ԼՂՀ-ում, դրանք դրսեւորվել են ավելի ցածր մակարդակով, քան ՀՀ-ում:

ՀՀ-ում 2002-12թթ. ժամանակահատվածում ոչ պարենային ապրանքների գների միջին տարեկան աճը կազմել է 3.4%, իսկ ԼՂՀ-ում՝ 4.5%: Ոչ պարենային ապրանքների գծով ԼՂՀ-ում գների մակարդակը ձեւավորվում է հիմնականում ՀՀ-ին համահունչ, սակայն գնաճային ավելի բարձր ճնշումներով: Դա հիմնականում պայմանավորված է նշված արտադրատեսակների մեծ մասի ներմուծման հանգամանքով, իսկ վերջինն էլ իր հերթին ենթադրում է ՀՀ-ում արձանագրված գնաճի գերազանցում՝ պայմանավորված տրանսպորտային ծախսերով եւ ներկրման հետ կապված այլ ծախսերի ու վերադիրներով: Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսի առավել բարձր ցուցանիշ արձանագրվեց 2009թ., ինչը պայմանավորված էր հիմնականում միջազգային շուկայում ոսկու գների եւ դեղամիջոցների գների բարձրացմամբ:

Վերլուծելով վերջին տասը տարիներին ՀՀ-ում եւ ԼՂՀ-ում ձեւավորված գնաճային դրսեւորումները՝ կարելի է արձանագրել, որ ընդհանուր առմամբ՝ ԼՂՀ-ում գնաճը դրսեւորվել է ՀՀ-ին համահունչ: Տնտեսության առանձին հատվածներում արձանագրված գնաճի մակարդակը ԼՂՀ-ում գերազանցել է ՀՀ համանման ցուցանիշը, բացառություն է եղել միայն գյուղատնտեսության ոլորտը, որտեղ արձանագրված միջին տարեկան գնաճը զիջել է ՀՀ-ի նույն ցուցանիշին: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ լինելով փոքր պետություն՝ ԼՂՀ-ում գյուղատնտեսական արտադրանքի որոշ մասը ձեւավորվում է տնտեսության ներսում, ուստի՝ գնաճի ձեւավորման առումով արտաքին գնաճային ճնշումների ազդեցությունը այս ոլորտում համեմատաբար մեղմ բնույթ է կրում: Գնաճային ճնշումները հիմնականում պայմանավորված էին պարենային ապրանքների գների աճով, որի մի մասն էլ իր հերթին պայմանավորված էր միջազգային շուկաներում ձեւավորված պարենային ապրանքների գնաճով: Բարձր գնաճային միջավայրին որոշ չափով նպաստել են նաեւ ներքին շուկաներում ձեւավորված մենաշնորհային եւ անառողջ մրցակցային երեւույթները:

ԼՂՀ տնտեսության զարգացման համար հիմնական խոչընդոտը համարվում է քաղաքական անկայուն դաշտում գտնվելը: Տնտեսության զարգացմանը նաեւ խոչընդոտում են փոքր տնտեսություններին բնորոշ անառողջ մրցակցային միջավայրը եւ տնտեսության որոշ ճյուղերում առկա մենաշնորհային դրությունը: Այս առումով կարեւորվում է ընդլայնել այն կառույցների լիազորությունները, որոնք պարտավորված են չթույլատրել տնտեսության մեջ անառողջ մրցակցությամբ եւ մենաշնորհային գների ձեւավորումը: Գնաճի կառավարման տեսանկյունից կարեւորվում է պետական հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը, ինչը իրական խոչընդոտ կդառնա տնտեսության մեջ մենաշնորհային գների ձեւավորմանը:

Դրամավարկային քաղաքականության դրսեւորումները ԼՂՀ-ում ունեն որոշ առանձնահատկություններ: Նախ՝ ԼՂՀ-ն, չունենալով սեփական ազգային դրամական միավոր, չի իրականացնում դրամավարկային անկախ քաղաքականություն՝ դրանով իսկ ԼՂՀ-ն ամբողջովին կրում է ՀՀ կողմից վարվող դրամավարկային քաղաքականության ազդեցությունը: Մյուս կողմից, ինչպես նշվեց, այն իրականացնում է հարկաբյուջետային անկախ քաղաքականություն: Այս առումով կարեւոր է ԼՂՀ հարկաբյուջետային ցուցանիշների ներառումը դրամավարկային ցուցանիշների կանխատեսման ժամանակ, որը կարող է արդյունավետ իրականացվել ՀՀ կենտրոնական բանկի եւ ԼՂՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության համագործակցության միջոցով: ԼՂՀ տնտեսության մեջ գնաճային ճնշումները պայմանավորված են նաեւ ներքին շուկային բնորոշ անառողջ մրցակցային ու մենաշնորհային բնույթով: Այս տեսանկյունից կարեւորվում է գնաճի արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրումը պետության կողմից, ինչը, սակայն, չպետք է խոչընդոտի շուկայական տնտեսության հիմնադրույթների իրագործումը:

ԼՂՀ նման փոքր ու բաց տնտեսություններում գնաճի ձեւավորման բավարար հիմք է ոչ մոնետար, այդ թվում նաեւ հարկաբյուջետային ազդակը: Այս առումով կարեւոր դեր ու նշանակություն է ձեռք բերում հարկաբյուջետային եւ դրամավարկային քաղաքականությունների համահարթեցումը: Վերջինի իրագործման նպատակով, հիմք ընդունելով ՀՀ-ում առկա փորձը, ցանկալի կլիներ յուրաքանչյուր տարվա ԼՂՀ բյուջեի նախագծի քննարկման ընթացքում հաշվի առնել ՀՀ կենտրոնական բանկի՝ որպես դրամավարկային միասնական քաղաքականություն իրականացնող մարմնի եզրակացությունը վերոնշյալ նախագծի վերաբերյալ: ԼՂՀ տնտեսության համար, որտեղ առկա է կայուն ձեւավորված բյուջետային պակասուրդ, մեծ կարեւորություն ունի բյուջետային պակասուրդի ֆինանսավորումն իրականացնել առավել արդյունավետ աղբյուրներից: ԼՂՀ-ում 2010թ. սկսած՝ բյուջետային պակասուրդը ֆինանսավորվում է առեւտրային բանկերի ներգրավված փոխառությունների հաշվին:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետեւանքները ԼՂՀ տնտեսությունը կրեց 2010թ., ինչը դրսեւորվեց պետական բյուջեի հարկային եկամուտների կրճատմամբ: Արդյունքում՝ առաջացավ պետական բյուջեի պակասուրդ, որի ֆինանսավորման հիմնական աղբյուրը դարձան բանկային փոխառությունները: 2012-2013թթ. փոխառությունների կտրուկ աճը պայմանավորված էր նախկին պարտավորությունների մարման անհրաժեշտությամբ, այսինքն՝ տեղի է ունենում պետական ներքին պարտքի վերափոխում, երբ նախկինում առկա պարտավորությունները մարվում են նոր պարտավորությունների հաշվին: Այս առումով նպատակահարմար է վերլուծության ենթարկել զուտ փոխառու միջոցների դինամիկան, որը ներկայացնում է փոխառությունների ստացման եւ մարման տարբերությունը:

2010-12թթ. ժամանակահատվածում ԼՂՀ-ում զուտ փոխառու միջոցները աճել են մոտ երկու անգամ, ինչը հիմնականում պայմանավորված էր բյուջետային ծախսերի կատարման անհրաժեշտությամբ: Նշված ժամանակահատվածում զուտ փոխառու միջոցները կազմել են ԼՂՀ պետական բյուջեի սեփական եկամուտների 10-15%-ը:

Բանկային վարկերի միջոցով բյուջետային պակասուրդի

ֆինանսավորման մեխանիզմը ԼՂՀ նման տնտեսություններում, որտեղ գնաճը պայմանավորված է նաեւ ոչ մոնետար գործոններով, կարող է առաջացնել լրացուցիչ գնաճային ճնշումներ: Այդ առումով նպատակահարմար է կիրառել բյուջետային պակասուրդի ֆինանսավորման այլընտրանքային տարբերակներ:

ԼՂՀ-ում բյուջետային պակասուրդի ֆինանսավորման առավել արդյունավետ աղբյուր կարող է լինել պետական արժեթղթերի թողարկումը: Այն հնարավորություն կտա բյուջեի պակասուրդի ֆինանսավորումն իրականացնել ավելի քիչ ծախսերով, ինչը պայմանավորված կլինի արժեթղթերի եկամուտների գծով հարկային արտոնությունների սահմանմամբ: Արդյունքում՝ արժեթղթերի թողարկումը ձեռնտու կլինի եւ՛ այն թողարկողին, եւ՛ ձեռք բերողին: Այս առումով անհրաժեշտ է ներդնել արժեթղթերի թողարկման գործընթացը կազմակերպելու հստակ մեխանիզմներ, մասնավորապես պետք է ներդրվի հստակ իրավական կարգավորման դաշտ: Արժեթղթերը պետք է ապահովված լինեն բյուջետային եկամտով, բյուջետային երաշխիքով կամ այն ծրագրի եկամտով, որի համար թողարկվում են: Արժեթղթերի թողարկման կարեւոր սկզբունքներից են դրա մարման ապահովվածությունը, թափանցիկությունը, ինչպես նաեւ դրանց նկատմամբ հստակ վերահսկողության իրականացումը:

Զարգացած պետություններում պետական եւ տեղական կառավարման մարմիններին կից ստեղծված են հատուկ գործակալություններ, որոնք իրականացնում են արժեղթերի թողարկումը եւ հաշվառումը: ԼՂՀ-ում սկզբնական շրջանում նպատակահարմար կլինի այդ գործառույթը վերապահել ԼՂՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանը, այնուհետեւ բնակչության վստահությանը զուգընթաց կիրառել միջազգային պրակտիկայի դրույթները: Արժեթղթերի թողարկման ընթացքում կարեւոր նշանակություն ունի դրանց օպտիմալ ծավալի սահմանումը, որը մի կողմից պետք է բավարար լինի բյուջետային պակասուրդը ֆինանսավորելու համար, իսկ մյուս կողմից էլ հնարավոր պայմաններ ստեղծվի դրանց մարման համար: Այս առումով անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել արժեթղթերի թողարկման ֆիզիկական կամ հարաբերական ցուցանիշներ: Հաշվի առնելով ԼՂՀ-ում բյուջետային պակասուրդի ֆինանսավորման ներկայում ձեւավորված դինամիկան՝ նախընտրելի կլինի, որ արժեթղթերը կազմեն ԼՂՀ պետական բյուջեի սեփական եկամուտների 13-16%-ի չափով: Արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման եւ հաշվառման գործընթացը արդյունավետ կազմակերպելու տեսանկյունից անհրաժեշտ է ՀՀ կառավարության հետ կնքել համագործակցության համաձայնագիր, որով կապահովվի արժեթղթերի տեղաբաշխման ու հաշվառման ճիշտ եւ կանոնակարգված մեխանիզմների ներդրումը: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկումը պետք է իրականացվի հետեւյալ փուլերով.

✓արժեթղթերի թողարկման մասին համապատասխան որոշման ընդունում,

✓արժեթղթերի գրանցում՝ հիմք ընդունելով վերոնշյալ որոշումը,

✓արժեթղթերի տեղաբաշխում,

✓արժեթղթերի տեղաբաշխման մասին հաշվետվության ներկայացում:

Արժեթղթերի տեղաբաշխումից հետո անհրաժեշտ է հստակ հաշվառման մեխանիզմների ներդրումը, որի արդյունքում հնարավոր կլինի արդյունավետ վերահսկողություն սահմանել արժեթղթերի տեղաբաշխման, դրանց գծով տոկոսների վճարման եւ մարման նկատմամբ: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տվյալ տարում ծրագրավորվող բյուջեի դեֆիցիտի չափը, դրա ֆինանսավորման այլընտրանքային տարբերակները, տեղաբաշխման անհրաժեշտության աստիճանը: Սակայն արժեթղթերի թողարկման ժամանակակից փորձը բնութագրվում է վճիռների կայացման ֆիսկալ նախապատվություններով, երբ առաջնային է բյուջեի պակասորդի ֆինանսավորման հարցը, մինչդեռ դրամավարկային հետեւանքները ընդհանրապես հաշվի չեն առնվում: Թողարկվող պարտատոմսերի ծավալն իհարկե ներկայում մեծ չէ, սակայն նշված գործիքը առաջիկայում կարող է լուրջ միջոց դառնալ ոչ միայն բյուջեի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման, այլեւ բազմաբնույթ ներդրումային ծրագրերի իրականացման եւ հեռանկարային խնդիրների լուծման համար: Տվյալ դեպքում կիրառվող գործիքը կարող է գնաճային զգալի ռիսկեր պարունակել, եւ այդ խնդրի կարգավորումը կարեւոր դեր կունենա ԼՂՀ տնտեսական քաղաքականության արդյունավետության ու գնաճի կառավարման առումով:

ՀՀ-ում գործում է «ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ կենտրոնական բանկի միջեւ համագործակցության որդեգրած սկզբունքների վերաբերյալ» համաձայնագիր (կնքված 13.10.2006թ.), որով կարգավորվում են, ՀՀ կենտրոնական բանկի ու Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության միջեւ համագործակցության մեխանիզմները, կարգը եւ այլն: Դրամավարկային քաղաքականության կարգավորման արդյունավետության տեսանկյունից ցանկալի կլիներ վերոնշյալ համաձայնագիրը կնքել նաեւ ԼՂՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հետ, ինչը հնարավորություն կտա ԼՂՀ հարկաբյուջետային հատվածի ցուցանիշները հաշվի առնել ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակման ժամանակ: Այս գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով նախընտրելի կլինի, որ վերոնշյալ համաձայնագրի շրջանակներում ԼՂՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանումն իրականացնի ԼՂՀ-ում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ՀՀ համապատասխան բանկերի մասնաճյուղերի կողմից ԼՂՀ տարածքում իրականացված ֆինանսական գործառնությունների համալիր վերլուծություններ, որն առավել թափանցիկ ու մատչելի կդարձի կանխատեսելիության աստիճանը: Այս առումով առավել կարեւորվում է ՀՀ դրամավարկային քաղաքականության մշակման ժամանակ հաշվի առնել ԼՂՀ հարկաբյուջետային հատվածի ցուցանիշները, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ կանխատեսել դրամավարկային ցուցանիշները եւ կառավարել գնաճային դրսեւորումները:

Ներկայացվել է 14.06.2013թ.
Ընդունվել է տպագրության 25.06.2013թ.

1. Աղբյուրը՝ ԼՂՀ եւ ՀՀ ԱՎԾ հրապարակած պաշտոնական տվյալներ, 2002-2012
2. Աղբյուրը՝ ԼՂՀ ԱՎԾ հրապարակած պաշտոնական տվյալներ, 2002-2012
3. Աղբյուրը՝ ՀՀ եւ ԼՂՀ ԱՎԾ հրապարակած պաշտոնական տվյալներ, 2002-2012
4. www.stat-nkr.am
5. Աղբյուրը՝ 2010-2012թթ. ԼՂՀ «Պետական բյուջեի մասին» օրենքներ
6. Նույնը